ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

02.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/54

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Որդի Տարոն» ՍՊԸ-ի կողմից 12.04.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/54 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Որդի Տարոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Որդի Տարոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 12.04.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար ՀՀ ոստիկանության Ինտերպոլի ԱԿԲ-ի վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգին 29.03.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Որդի Տարոն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2018թ. ժամը 14:45-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (29.03.2018թ.) ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի՝ «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Որդի Տարոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը չհամապատասխանող՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը գերազանցում է Օրենքով նախատեսված շեմը:

Նույն արձանագրության 2-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Որդի Տարոն» ՍՊԸ-ի հայտը հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը գերազանցում է Օրենքով նախատեսված շեմը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ընկերությունը հայտնել է, որ «Որդի Տարոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (29.03.2018թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել: Ըստ երևույթի հարկային պարտավորությունն առաջացել է նոր ՀՀ Հարկային օրենսգրքի ընդունմամբ պայմանավորված՝ նոր էլեկտրոնային համակարգի ներդրմամբ, որի արդյունքում անհասկանալի պատճառներով Ընկերությանը վերագրվել է այնպիսի հարկային պարտավորություն, որն իրականում գոյություն չի ունեցել:

Վերոհիշյալ փաստը հաստատվում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 10 բաժնի կողմից տրված տեղեկանքով, համաձայն որի «Որդի Տարոն» ՍՊԸ -ն 29.03.2018թ. դրությամբ չունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ (կից ներկայացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկանքը):

Նման պայմաններում Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Որդի Տարոն» ՍՊԸ-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով երաշխավորված գնումների գործընթացին մասնակցության իրավունքը, ինչպես նաև նույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, քանզի ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունենալով ժամկետանց պարտավորություններ, զրկվել է օրենքով երաշխավորված տվյալ գնման գործընթացին իր հետագա մասնակցության իրավունքից:

Ընկերությունը բողոքով խնդրել է դադարեցնել «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2018թ. ժամը 14:45-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացրած որոշումը՝ «Որդի Տարոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով:

«Որդի Տարոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.04.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը,

2. «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը 13.04.2018թ. թիվ 21/1-844 գրությամբ «Որդի Տարոն» ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

2018 թվականի մարտի 21-ին «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը հայտարարել էր Ինտերպոլի ԱԿԲ-ի վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր էին ներկայացրել թվով տաս ընկերություններ:

Սույն թվականի մարտի 29-ին «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված հայտերի գնահատումն իրականացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով. «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են» և նույն հոդվածի 2-րդ մասի 2 կետով. «Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ 1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով» սահմանված պահանջներին համաձայն:

«ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7.3-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել «Որդի Տարոն» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը սույն թվականի մարտի 29-ին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի և «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7.12-րդ կետի պահանջներով, որոշում է կայացրել հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) առաջին տեղ

զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7.14-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետում, Կոմիտեն հրավերի 1-ին մասի 7.12-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրել էր հարցման մասին՝ հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն, առ այն, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 88 085 ՀՀ դրամ, ինչը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը՝ ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը (կից ներկայացվում է Կոմիտեի կողմից տրված եզրակացության պատճեն):

Հանձնաժողովը սույն թվականի ապրիլի 7-ին N3 արձանագրության 2-րդ կետի «գ» պարբերությամբ որոշում էր կայացրել մերժել Ընկերության հայտը՝ Կարգի 44-րդ կետի՝ եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից, ինչպես նաև «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7.14-րդ կետի պահանջներին համաձայն: Նշված արձանագրության 3-րդ կետի «ա» ենթակետով Հանձնաժողովը որոշում էր կայացրել նաև 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հաջորդ՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 7.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով,

գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Հրավերի 7.14-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Սույն կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Այսինքն՝ Հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ է, հայտերը գնահատվել են հրավերով սահմանված կարգով ու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համաձայն, և գնահատման արդյունքում Ընկերության հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի և «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.14-րդ կետի պահանջները:

«ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.04.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար Ինտերպոլի ԱԿԲ-ի վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Որդի Տարոն» ՍՊԸ-ն 29.03.2018թ. հայտ է ներկայացրել:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.04.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Որդի Տարոն» ՍՊԸ-ն 29.03.2018թ. դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն ***88 085 ՀՀ դրամի չափով:***

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2018թ. ժամը 14:45-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Որդի Տարոն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 10 բաժնի կողմից 06.04.2018թ. տրված տեղեկանքի համաձայն՝ «Որդի Տարոն» ՍՊԸ-ն 29.03.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 17.04.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/7174-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե «Որդի Տարոն» ՍՊԸ-ն 29.03.2018թ. դրությամբ ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ:

6. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 26.04.2018թ. թիվ 1/6-1/21259-18 և 27.04.2018թ. թիվ 1/6-1/21559-18 գրություններով հայտնել է, որ «Որդի Տարոն» ՍՊԸ-ի ***ժամկետանց հարկային պարտավորությունը 29.03.2018թ. դրությամբ կազմում է 88 085 ՀՀ դրամ:***

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով «Որդի Տարոն» ՍՊԸ-ի 12.04.2018թ. բողոքը, «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի 13.04.2018թ. թիվ 21/1-844 գրությունը և փաստաթղթերը, ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 10 բաժնի կողմից 06.04.2018թ. տրված տեղեկանքը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 26.04.2018թ. թիվ 1/6-1/21259-18 և 27.04.2018թ. թիվ 1/6-1/21559-18 գրությունները, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի

կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: ***Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:*** Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար Ինտերպոլի ԱԿԲ-ի վարչական շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Որդի Տարոն» ՍՊԸ-ն ***29.03.2018թ.*** հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Որդի Տարոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 30.03.2018թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.04.2018թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Որդի Տարոն» ՍՊԸ-ն ***29.03.2018թ. դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 88 085 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2018թ. ժամը 14:45-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Որդի Տարոն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը չհամապատասխանող՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը գերազանցում է Օրենքով նախատեսված շեմը:

Ընկերությունը բողոքին կից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 10 բաժնի կողմից 06.04.2018թ. տրված տեղեկանք, որի համաձայն՝ «Որդի Տարոն» ՍՊԸ-ն 29.03.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 17.04.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/7174-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե

«Որդի Տարոն» ՍՊԸ-ն 29.03.2018թ. դրությամբ ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ:

Ի պատասխան վերոհիշյալ գրությանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 26.04.2018թ. թիվ 1/6-1/21259-18 և 27.04.2018թ. թիվ 1/6-1/21559-18 գրություններով հայտնել է, որ «Որդի Տարոն» ՍՊԸ-ի ***ժամկետանց հարկային պարտավորությունը 29.03.2018թ. դրությամբ կազմում է 88 085 ՀՀ դրամ:***

Նույն գրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է նաև, որ Ընկերության կողմից 05.04.2018թ. ներկայացվել է 2016թ. Շահութահարկի ճշտված հաշվարկ, որի արդյունքում պակասեցվել են 2016թ. Շահութահարկի և 2017թ. Կանխավճարների հաշվարկային մեծությունները:

Սույն թվականի 06.05.2018թ. Ընկերության կողմից ՀՎՍՎ սպասարկման թիվ 10 բաժին է ներկայացվել դիմում 29.03.2018թ. դրությամբ ունեցած պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք տրամադրելու մասին: Առ 06.04.2018թ. ԱՀՔ-ում կատարված վերահաշվարկի արդյունքում Ընկերությանը տրամադրվել է տեղեկանք պարտավորությունների բացակայության վերաբերյալ:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.14-րդ ենթակետով սահմանվել է, որ Կոմիտեն սույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: ***Եթե սահմանված ժամկետում տրամադրված***

տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ փվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն հրավերի 1-ին մասի 7.19 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

«Որդի Տարոն» ՍՊԸ-ն «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Միևնույն ժամանակ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.04.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Որդի Տարոն» ՍՊԸ-ն ***29.03.2018թ. դրությամբ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, ունի ժամկետանց հարկային պարտավորություն 88 085 ՀՀ դրամի չափով:***

Ընկերությունը ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 10 բաժնի կողմից 06.04.2018թ. տրված տեղեկանքը, որի համաձայն՝ «Որդի Տարոն» ՍՊԸ-ն 29.03.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, սակայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 26.04.2018թ. թիվ 1/6-1/21259-18 և 27.04.2018թ. թիվ 1/6-1/21559-18 գրությունների համաձայն՝ «Որդի Տարոն» ՍՊԸ-ն ***29.03.2018թ. դրությամբ այնուամենայնիվ ունեցել է 88 085 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն,*** որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «Որդի Տարոն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունը որակելով իրականությանը չհամապատասխանող և մերժելով Ընկերության հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և առաջնորդվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի պահանջներով, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Որդի Տարոն» ՍՊԸ-ի կողմից 12.04.2018թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Որդի Տարոն» ՍՊԸ-ի կողմից 12.04.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**